Բանդիվան

Համայնքի ղեկավար՝

Հեռ +

Մակերես՝ 10.8կմ^2

Բնակչություն՝ 263

bandivan.shirak@mta.gov.am

Գյուղ Ամասիայի տարածաշրջանում, մարզկենտրոնից գտնվում է 28կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Բանդեվան, Բանդիվան Փոքր, Պենտեվան, Բանդիվան Վերին անվանումները: Ներկայիս գյուղից մոտ 1-1.5 կմ արևմուտք գտնվում է Բանդիվան Ներքին լքված գյուղը, որը 1951-52 թթ միացվել է Վերին Բանդիվանին և այդ ժամանակնից կոչվել Բանդիվան:
Գյուղը գտնվում է Ախուրյան գետի ձախ ափին՝ ծովի մակարդակից 1940մ բարձրության վրա: Կիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են մառախուղները և ձնաբքերը: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 600-700մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստանները:
Գյուղի շրջակայքում կան այրվող թերթաքարի պաշարներ, որոնք չունեն արդյունաբերական նշանակություն:
Գյուղի բնակչության նախնիները 1829թ գաղթել են Կարսի մարզից: 1831 թ-ին գյուղն ունեցել է 213, 1897 թ-ին՝ 806, 1970 թ-ին՝ 336, 1979 թ-ին՝ 315 բնակիչ: Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համայնքը 2013թ-ի հունվարի 1-ի դրությամբ ունեցել է 263 մարդ: Սեռային կազմում տղամարդիկ կազմում են 47%, կանայք՝ 53%: Տարիքային խմբերը բաշխված են հետևյալ կերպ. մինչաշխատունակներ՝ 29%, աշխատունակներ՝ 53%, հետաշխատունակներ՝ 18%: Ունի 54 տնտեսություն: Ունի դպրոց, գրադարան, բուժկետ, կապի հանգույց:
Գյուղատնտեսական հողահանդակները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են որպես վարելահողեր՝ կազմելով 155հա: Պետական հողերը գլխավորապես օգտագործվում են որպես վարելահողեր, արոտավայրեր՝ կազմելով համապատասխանաբար 133 և 594 հեկտար: Զբաղվում են պտղաբուծությամբ, հացահատիկային, բանջարաբոստանային, կերային կուլտուրաների, կարտոֆիլի մշակությամբ: Զբաղվում են նաև անասնապահությամբ, մեղվաբուծությամբ:
Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են դպրոցական գույքի նորացումը, խմելու ջրագծերի վերանորոգումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքի իրացումը, գազաֆիկացումը:

ՀՀ Շիրակի մարզ, գ. Բանդիվան

Ինդեքս՝ 2701